

891-85
L-63

ԻՏԿԱՐԱՐ ՊԵՏՏՐՈՒ

2

ՊՕՂՆԱՆԻ ՌԻՍՈՒՅՉԻ
ՕՐԱԴՐՈՒՄ

Բ. Ա. Բ. Կ.

Ուսումնական

Յ. Ն.

Հայկական

Ս. Կ. Կ.

Հայկական Պետական Գրադարան

ԵՐԱՆ

ԻՏԿԱՐԱՐ ՊԵՏՏՐՈՒ

84

2011

ԼԻՏԳՆՈՒՄ ԳԵՏԱՐԱՆ

ԼԻՏԳՆՈՒՄ ԳԵՏԱՐԱՆ

2

ԿԱՅԻՍՏՈՒՆ ԳՐԱԳՆԱԳՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ԿԱՅԻՍՏՈՒՆ ԳՐԱԳՆԱԳՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ



ՊՕԶՆԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐԱԳՐԻՑ

Թ. Ա. Ր. Գ.

Ունեւորութեան

Յ. Ն.

Կոմիտէ

Ստեփան



891.85
L-63

Մեղադրանքի Մահապատժիկ-Յանգուստան

ՇՈՒՇԻ

ԼԻՏԳՆՈՒՄ ԳԵՏԱՐԱՆ

ԼԻՏԳՆՈՒՄ ԳԵՏԱՐԱՆ

84

891.85

6-63

ար.

19 NOV 2010

ՊՕԶՆԱՆԻ ՌԻՍՈՒՑԶԻ

ՕՐԱԳՐԻՑ

ԼԻՏԱԿՈՍԻ ՊԵՏԱՐԵՐՈՒ

ԹԱԳԻ. ԵՒ ՀՐԱՏ.

ՈՋ ԼՈՂ ՈՋ, խնդալ,

այլ հասկանալ:

Սպիկ'նոգա:

Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

№ II

4884

Տպարան Միլիտանտի Մահուտի-Յակոբեան:

ՇՈՒՇԻ

1001
4884

16028

420

1918

Ἰ Ὀ Ἦ Ἐ Ὶ

Հայ ծնողներին և դասա- տարակներին:

[illegible]

Дозв. цен. 3 Марта 1881 г. Тифлисъ.
Цензоръ Меликъ-Меграбовъ

114

14881

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼԻ ՄԱՐԿԱՆԵՐԻ ՄԱՐԿԱՆԵՐԻ

43415

Ռուսաց «Вѣстникъ Европы», ամսագրի 1880 թ.

Մարտ ամսի գրքում կայ մի Թարգմանական յօդուած այս վերնադրով. «Изъ дневника познамскаго учителя, рассказъ Литвоса» (Պօղնանի ուսուցչի օրագրից, Լիտվոսի պատմած): Յօդուածի բնագիրը լեհերէն է և արդւած է նշել Վարշայում հրատարակող լեհական

Niwa երկշարած ամսագրի 1879 թուի դեկտեմբեր ամսի առաջի համարում: Հեղինակը Լիտվոսն է, դա է կեղծ անուն: Երևատարդ հեղինակը նոր է անուն հանել իւր աղջային գրականութեան մէջ և խոստանում է լինել մինը ժամանակակից հոգւոյն համաձայն գրող արդիւնաշատ տաղանդներէից և այդ երևում է նորանից: Որ նա ներկայանում է մեզ պարզապէս՝ հետեւող այնշարժման, որ նկատւում է լեհական մատենագրութեան մէջ, այն է՝ անցումն աւանական գրական ոճից դէպի աւելի երական դպրոցը, որն աղբիւրը բացառող է: Հիմնադրական, այլ նկատողութիւնն և մեզ շօշաւառող իրական կեանքի ուսումնասիրութիւնը, որն համար փանտազման է մի օգնական գրական շէնքը. կառուցանելու համար:

ՊՈԶՆԱՆԻ ՈՒՍՈՒՅՈՒ ՕՐԱԳՐԻՑ:

(ԱՆՅԲԸ ՊԱՏԱՀՈՒՄ Է ՊՐՈՒՍԻԱՅՈՒՄ.)

Վանթերի լոյսը թէև չափազանց նուազ՝ սակայն յաճախ ինձ զարթնացնում էր. շատ անգամ զարթնելով՝ զիշերուսայ ժամը երկուսին, երեքին՝ տեսնում էի Միքայէլին դեռ ևս գլուխը կախած գրքերին վերայ՝ սեղանի մօտ նրա առաջ: Միայն մի ձերմակեղէն հազած, փոքրիկ և նիհար կերպարանքով՝ սեղանի երեսի գրքերի վերայ խոնարհած՝ մի տարօրինակ անսիւք էր ներկայացնում: Վիշերային լուծեան մէջ տղայի յոգնած

ձայնը մեքենաբար կրկնում էր լատիներէնէ՝
խոնարհմունքն և յունարէնի հօլովները՝
այնպիսի միօրինակութեամբ, ինչպէս եկե-
ղեցում կրկնում են աղօթքները: Արբեւ
նորան պատուիրում էի պառկել քնելու՝
տղան վախեցած աչքերով նայում էր ինձ
և բօպէական լռութիւնից յետոյ ասում.
«դասերս դեռ չեմ սերտել»:

Սակայն ես նորա հետ պարտադրում
էի ժամը չորսից մինչև ութը և ապա ին-
նից մինչև կէս գիշեր և երբէք չէի պառ-
կում հաւաստի չեղած, որ Սիբայէլը պատ-
րաստած գիտէ բոլոր դասերը, ինչպէս հար-
կէն է: Նշմարիտը խոստովանած, այդ բո-
լորը չափազանց էր: Ա երջին դասը սեր-
տելով, բոլոր բառերն և մինչև անգամ ըս-
տորակէտերը բերան անելուց յետոյ՝ երե-
խան մոռանում էր մի ժամ առաջ սովո-

րածը, բայց յունարէն, լատիներէն, ղեր-
մանէրէն բայերն և զանազան նահանգնե-
րի գերմաներէն անունները խեղճ Սիբա-
յէլն զլխում ստեղծում էին այնպիսի մի
խառնափնդորութիւն, որ խեղճն ի գուր էր
աշխատում ննջելու: Այդ ժամանակ նա
լքում էր մահճակալից, կանթեղը վառում
և նորից ձեռքն առնում գրքերը: Արբեւ
նորա այդ աւելորդ ջանասիրութեան հա-
մար բարկանում էի՝ նա լաց էր լինում և
աղաչում չքստիպել իբրեւ պառկելու: Ժա-
մանակով ես ինքս էլ վարժուեցայ կանթե-
ղի այդ աղօտ լուսին, լատիներէնի բայե-
րին և նահանգների գերմաներէն անուննե-
րին, որ լսվում էր գիշերուայ մէջ:

Այն գիշերները՝ երբ Սիբայէլը չէր
պարտադրում, ես արթնանում էի. ի հարկէ
ինձ կը պատկանէր ժամը երկուսին երե-

քին նորա այդ անսահման ջանասիրութեանն
արդէւք լինել, որ նա ուժից չը ընկնէր,
ի՞նչ անէի ես: Պարտաւոր էր ամեն օր
մի կերպ գոնէ սովորել իւր դասերը, հա-
կառակ դէպքում նորան կ'արտաքսէին ու-
սումնարանից և Աստուծուն է միայն յայտ-
նի, թէ այդ ինչպէս կը տրամացնէր աւի-
կին Մարիամին, որն իւր մարդու մահից
յետոյ մնացել էր միայնակ իւր երկու երե-
խաներով և իւր բոլոր յոյսն ու ապակէնը
միակ Սիբայէն էր: Անելք դրութեան
մէջ էի ես, որովհետեւ հաւատացած էի,
թէ մտաւոր անչափ պարապմունքը փչաց-
նում է տղայի առողջութիւնն և կարող է
նորան ոչնչացնել: Անհրաժեշտ էր վերա-
կանդնել նորա ոյժերը, որը փչացած էր
լատիներէն և յունարէն լեզուների վերայ,
նորան հարկաւոր էր պարապել մարմնամար-

դութեամբ, ձիով ման դալ, բայց այդ բո-
լորի համար ժամանակ չը կար: Արեւիկն
նշանակում էին բերան սովորելու համար
աշխարհի ահագին տպագրութեամբ շարքեր
և թերթեր, այնքան բան ունէր դրելու
և արտագրելու, որ ես ձեռք սրտիս դրած
խոստովանում եմ ու կրկնում, որ ժամա-
նակը բաւականութիւն չէր անում: Արե-
ւիկի ամեն մի բոլակն որն անհրաժեշտ էր
ղուարձութեան, առողջութեան և կեանքի
համար խլում էին յունարէն, լատիներէն և
գերմաներէն լեզուները: Առաւօտները, երբ
եւ նորա պայուսակի մէջ դարսում էի գրե-
րը, իմ աչքով տեսնում էի, թէ ինչպէս
նորա նուազ ուսերը կուսնում էին բիւզան-
դական ստուար հատորների ծանրութեան
տակ. ցաւից սիրտս կրծքիս մէջ ճնշվում
էր: Արբեմն ես վճռում էի դիմել ուսու-

ցիւններին, որ նորա մեզմէ ուշադրութեամբ
վարձէին նուազ երեսայի հետ, բայց զեր-
մանական մանկավարժներն ուշ չ'էին դարձ-
նում իմ խնդրանաց և իմ բոլոր պատճառ-
ներին ու արդշանքներին պատասխանում
էին, որ իբր թէ՝ ես երեսային երես եմ
տալիս, թէ՝ նա, ինչպէս երեւում է քիչ է
պարսպում, թէ՝ նորա արտասանութիւնը
վատ է... թէ՝ նա ամեն չնչին բանի առ-
թիւ լաց է լինում: Եւ ինքս տանջվում
եմ կրճքացաւից և սորա վերայ աւելաց-
րէք, որ ես օրօրոցից փշած ձգնաւորի
կեանք եմ վարում, այսպիսի պայմաննե-
րում ով որ էլ լինէր՝ ջլային և դիւրադրդիւ-
կը դառնար. այդ պատճառով ուսուցիչնե-
րի յանդիմանութիւնները կեանքիս բոլոր
րոպէները թունաւորում էին: Ո՛վ կարող
էր ինձանից լաւ իմանալ թէ արդեօք Մի-

քայէլը բաւական պարապում էր՝ թէ ոչ
'Դա մի մանուկ էր՝ բնութիւնից պարզ և
դուրս, Լստում զիսէ ինչպիսի բնու-
նակութիւններով, բայց այնքան համբերող
արարած, այնպիսի հաստատ բնաւորու-
թեան տէր, որ ես մինչև հիմայ այդ-օրի-
նակ մի երեսայի չեմ պատահել ու տեսել:
Խեղճ Միքայէն իւր մօրը պաշտում
էր և որովհետև լսել էք, որ տիկին Սա-
րիամը դժբաղդ և մի հիւանդոտ կ'է և
եթէ ինքը վատ կարդալու լինի՝ կարող է
նորա առողջութիւնը վերջնականապէս փշա-
ցնել, ուստի՝ նա հէնց որ մտածում էր իւր
ճուլութեան ցաւալի հետեանքների մասին՝
դողում էր և ամբողջ գիշերներն անց էր
կացնում գրքերի վերայ, միայն թէ իւր մօ-
րը չը տրտմացնէ:

Եւ անդամ երբ վատ նշանակներ

էր ստանում, նա լալիս էր և հեկեկում,
բայց ոչ ոք չէր հասկանում, թէ ի՞նչու
էր նա լաց լինում ու այնպիսի բոպկներում
ինչ տեսակ յանցաւոր էր ինքն իրան հա-
մարում: Եւ ո՞վ էր նորանով հետաքրքրու-
ղը: Նորա արտասանութիւնը վատ էր և
այդ բաւական է: Նա նորան ոչ երես էի տա-
լիս և ոչ էլ փչացնում, բայց աւելի ընդու-
նակ էի նորան ճանաչելու և հասկանալու
քան միւսները և զորա համար ես նորան
չէի նախատում իւր անյաջողութիւնների
պատճառով, այլ աշխատում էի միսթարել
նեղութեան միջոցում ու այդ մասին ես
ինձ էլ չեմ մեղադրում: Միանքիս մէջ ես
էլ քիչ չեմ աշխատել. տարել եմ քաղցա-
ծութիւն և ամեն կարօտութիւն, երբէք
չեմ եղել բաղդաւոր և չեմ էլ սպասում
լինել...: Եւ ո՞ր—բայց էհ, այժմ ընդունակ

եմ դարձել առանց ատամներս կրճաւելու գո-
րա մասին մտածել: Ղշմարիտ է, որ իմ
հաւատս էլ չի գալիս, թէ արժէ աշխար-
հումս ապրել, բայց դուք հենց զորա հա-
մար՝ որ ես կարեկից եմ ցաւի ու հոգի.
Միքայէլի հասակում գոնէ ես առողջ էի,
հասկանում էի զուարճութիւններ, վաղվա-
ղելով վողոցներում աղաւնիների եակից
կամ ընկերներիս հետ բաղերում խաղալով:
Շաղը ինձ չէր չարչարում, երբ ինձ ծե-
ծում էին՝ ես լաց էի լինում, բայց առ-
հասարակ ես ազատ էի, ինչպէս մի թը-
չուն և ոչինչի համար հոգս չէի անում:

Միքայէլն այդքանն էլ չ'ունէր: Վեան-
քը նորան դարձրել էր մի դարբնի սալ և
ինքն էլ մի ծանր մուրճ. նորա ուրախու-
թիւնը միայն սրտից բլլաւ ծիծաղն էր,
բաւական կատակներ անելն և արեղակի

Գառադայթներէն տաքացած յստակ օգի
նէջ զաղկելը: Բայց ցաւօք սրտի խոստո-
ւանում եմ, որ ես չ'էի տեսել մի երեսայ՝
որ իրեն կաղմուածքի պահանջների հետ
միացրած լինէր այդչափ աշխատանք.

Ընդ հակառակը, ես տեսել եմ երե-
խաներ ուսումնարան գնալիս զալիս՝ տխուր
կուացած զրբերի ծանրութեան տակ, թա-
ռամած, աչքերի շուրջը կնճռոտած, շա-
րունակ հեկեկոնքը խնդդեղով: Նորա ցա-
ւով ես էլ էի ցաւում, ցանկանում էի լի-
նել նորան պաշտպան և նեցուկ:

Աս էլ եմ ուսուցիչ՝ թէ և մասնա-
ւոր, բայց չը զիտեմ ինչպէս կապրէի աշ-
խարհումս, եթէ կորցնէի դէպի զիտու-
թիւնս ունեցած հաւատն ու զինք և նո-
րանից ստացած օգուտը: Արծու՞մ եմ մի-
այն որ ուսումն երեսայոց կեանքը չը պէտք

է ողբերգութիւն դարձնէ, որ լատինը չէ
կարող փոխարինել օդ, առողջութիւն. ու-
ղիլ կամ սխալ արտասանութիւնը չը պէտք
է մատաղ արարածների բաղդը վնասէ: Ար-
ծում եմ նոյնպէս, որ մանկավարժութիւնն
աւելի գերազանց է կատարում իւր դերն
երբ մանուկը զգում է թէ նա այն աջն է՝
որ քնքշաբար ուղղում է նորան և ոչ թէ
այն ժամանակն երբ դառնում է մի տան,
որը ճնշում է նորա կուրծքն և ոտի տակէ
տալիս այն ամենը ինչ նա սովորել է յար-
գել և սիրել: Աս այնպիսի հաստատամիտ
մարդ եմ, որ այդ դէպքում չեմ փոխիլ իմ
կարծիքն և աւելի հաստատ համոզվում եմ
մտաբերելով խեղճ Սիբայէլին, որին ես
այնքան ջերմ սիրում էի: Ա՛հց տարի ես
եմ եղել նորա ուսուցիչը, ակզրում իբրև
դաստիարակ և նորա երկրորդ դասաւանդը

Վերադառնալով իւր հետ դասերը կրկնող Մար-
քան ժամանակ բաւական էր, որ նորա հետ
սերտ կապ ունենայի. վերջապէս ինչ մեղքս
պահեմ, նա ինձ համար թանգ էր, ինչ-
պէս որդի. մի կնոջ, որն անչափ ինձ համար
անգին էր: Մարքանը նորան յայտնի չէր
և յայտնի էլ չի լինիլ երբեք:

Միշտ յիշում եմ, որ ես պարզապէս
մի անային ուսուցիչ եմ և միևնոյն ժամա-
նակ հիւանդոտ, իսկ նա հարուստ կալուա-
ծատիրոջ դուստր, անուշադարմ, կատա-
րեալ փրութիւն, որի վերայ ես չէի համար-
ձակուիլ մտածել անգամ: Բայց որովհետև
համանման, կեանքից կոտորուած սրտեր
որոնում են իրենց նեցուկ, ինչպէս մի խե-
ղճմոր թալիքից դուրս ձգուած, այդպէս
էլ ես սրտով յարեի էի նորան. ձեռքովս
ի՞նչ կը դարձնէի վերջապէս, դա նորա



համար մի մեծ էր. ես նորանից չեմ
պահանջում աւելի լոյս, քան արեգակից,
որը դարնան տաքացնում է իմ կուրծքը:
Սեղ տարի բնակվել եմ նորա տանը, վկայ
եմ եղել նորա ամուսնու մահուան, դժբաղդ
միայնակ, համարեա սուրբ այրի կնոջը տե-
սել եմ իւր դաւակներին զգուշիւ և
սիրելի. վերջապէս սա սէր էլ չէ, դա
իմ կրօնն է:

Միքայէլը բաւական նման էր իւր
մօրը. երբ նա աչքերն իմ վերաս էր ձը-
գում՝ թւում էր թէ ես նորա մօր երեսն եմ
տեսնում: Նորա դէմքին վերայ նկարվում
էին գրեթէ միևնոյն քնքոյշ գծերը, միև-
նոյն ճակատը ծածկուած բարդ-բարդ ոսկե-
թել մազերի շքուածով, կամարաձև յօն-
քերը, բայց ամենից աւելի՝ ձայնը: Նորա
երկունս էլ ջղային, ազնիւ և սիրող էին,

1887
1001

ընդունակ ու պատրաստ ամեն զոհ ու չար-
չարանք տանելու, բայց որոնք քիչ են գրա-
նում բաղդ, հանդիպելով կեանքի և նորա
իրականութեան հետ, տալով նորան աւելի
քան կարող էին նորանից ստանալ: Այդ-
պիսի մարդկանց դոտակարգն արդէն ան-
հետանում է և ես կարծեմ ժամանակիս
բնադէտները կարող էին նոցա մասին ա-
սել, թէ նոքա աշխարհ են գալիս սրտի
պխտով. այն է՝ նորանք սիրում են չափա-
զանց: **Ալեքսէի ընտանիքը** մի ժամանակ
շատ հարուստ էր, բայց չափազանց էր սի-
րել... զանազան փոթորիկներ տարան նոցա
հարստութիւնը, մնացածը թէև անկարե-
լի էր չքաւորութիւն մինչև անգամ աղ-
քատութիւն համարել, այնու ամենայնիւ
համեմատելով կորուստի հետ՝ շատ աննշան

էր: Ընտանիքի կրտսեր անդամը **Ալեքս-**
էն էր: Եւ տիկին **Սարիամը** նորան սիրում
էր, ոչ միայն իբրև իւր հարազատ զաւա-
կին, այլ իբրև իւր բոլոր յոյսի ապագա-
յում: Վժբադրաբար, բնադրումից բոլոր մայ-
րերին յատուկ նախազգացմունքով տեսնում
էր իւր զաւակի մէջ անհամեմատ ընդու-
նակութիւններ: Պէտք է ասած, որ տղան
իսկապէս բթամիտ չէր, այլ սրտականում
էր այն տեսակ երեսաներին, որոնց ընդու-
նակութիւնը սկզբում միջակ է լինում, բայց
ազարդանում է ֆիզիքական ոյժի և առող-
ջութեան հետ միասին: Այլ հանգամանք-
ներում նա կարող էր իւր ուսման ընթացքն
աւարտել և լինել որ և է ասպարիզում օգ-
տաւետ դործող: Եւ երկայ հանգամանքներում նա միայն

տանջվում էր և յիշելով այն մեծ կարծիքը, որ մայրն ունէր իւր ընդունակութեանց մասին, զուր ծգնում էր այդ համարումն արդարացնել: Աշխարհումս ես շատ բաների էի հանդիպել և աչքովս քիչ բան չէի տեսել, այդ էր պատճառը՝ որ ես վճռել էի ոչնչի վերայ չը զարմանալ, բայց խոստովանում եմ, ես շատ դժուարութեամբ հաւատացի, թէ կարող է լինել այնպիսի մի խառնափնդորութիւն, որում կամքի ոյժը, հաստատամտութիւնը, աշխատանքը կարող էին սպանել մի մանուկ: յա մի անբնական և հիւանդոտ երեւոյթ է և եթէ այս նեղութեան, թշուառութեան փոխանակ՝ բառերը կարողանային ինձ վարձատրել, ես կը կրկնէի Համլետի խօսքերը. «Աշխարհում կատարվում են իրողութիւններ, որոնց և ոչ իսկ երազել էին իմաստուն»

ներքի:

Միքայէլի հետ միասին աշխատում էի այնպէս, որ կարծես նորա նշանակներըց էր կախում և իմ իսկ ապագան: Եւ յիշուած մեր երկուսի նպատակը մէկ էր, այն է՝ չը վշտացնել նորա մօրը, ցոյց տալ լաւ վկայագիր և նորա շրթունքների վերայ բաղդաւորութեան ժպիտ յարուցանել: Երբ Միքայէլը լաւ նշանակ էր ստանում դաստանից վերադառնում էր փայլուն երեսով և կարծես, նա երջանիկ էր: Ինձ թւում էր որ այդ րոպէներում նա աճում էր և մեծանում: Նորա հանդած աչքերն այն ժամանակը յուզվում էին բուն երեխայական ուրախութեամբ և շողշողում էին ինչպէս կրակի հատիկների: Այդպիսի դէպքում Միքայէլը նեղութեանց վէր էր դնում զրքերով լի պայու-

սակը և քայլերը դէպի ինձ ուղղելով, սե-
նեակս էր մտնում և ասում. «Ո՛հ ինչպէս
մայրիկս ուրախ պիտի լինի, ես այսօր աշ-
խարհագրութիւնից ստացել եմ—Լ՞ո՛ւնչ, :
Եւ երբ ես նշանով ցոյց էի տալիս թէ
չեմ հասկանում, նա վազում էր ինձ մօտ
ամենաշտորհալի ձևով և վզիս փաթաթվե-
լով ասում, իբր թէ կամաց, սակայն շատ
բարձր ձայնով. «Հինգ, հաւատացէ՛ք, ճիշտ
մարիա, հինգ, : Երկուքիս կեանքի ամենա-
բաղդաւոր բոլէներն էին դոքա: «Ամանօ-
րինակ յաջողութիւններից յետոյ՝ Մի-
քայելը երեկոները ընկնում էր քաղցր
ցնորքների մէջ և երեւակայելով, թէ երբ
որ իրեն և յաջողութիւն ամենալաւ նշանակ-
ներ ստանալ՝ շէնջում էր մասամբ դէպի
ինձ և մասամբ էլ ինքն իրեն. «Ծննդեան
սօներին ևր գնանք Օւլէսինօ, ի հարկէ

ինչպէս ամեն տարի՝ նոյնպէս էլ այս տա-
րի լաւ ձիւն ևր դայ և մենք սահնակով
կ'երթանք, գնշելով ևր հասնենք, բայց մայ-
րիկս ի հարկէ ինձ ևր սպասէ, ևր դրդէ,
ևր համբուրէ և յետոյ ևր հարցնէ վկայա-
գրի մասին:

«Եւ դիմամբ տխուր կերպարանք ևր
տոտնամ, իսկ մայրս ևր կարդայ. սրբազան
պատմութիւն՝ գերազանց, դերմաներէն՝
հիանալի, լատիներէն՝ սքանչելի, բոլորը
հիանալի, :

Իսեղձ երեկայի արտասուքը գնում
էին և ես վոլսանակ նորան հանդարտացնե-
լու՝ ինքս էլ հետեւում էի նորա օրինակին:
Յողնած երեւակայութեամբ մտածում էի
Օւլէսինօում անցկացրած օրերը, այնուե-
ղի հանգստութիւնն և այն աղնիւ արա-
ւածը, որ կարգադրում էր և այն երջան-

կութիւնը, որ պիտի պատճառէր երեսայի
գալուստը և նորա վկայագրի գերազանց նը-
շանակները:

Այդպիսի բոսկիներից օգուտ քաղե-
լով՝ ես նորան խորհուրդներ էի տալիս
բացատրելով, որ մայրը շատ է աշխատում
նորա յառաջագիմութեան համար ու հոգս է
տանում նոյնպէս և նորա առողջութեան մա-
սին. ահա այդ պատճառով նա չը պիտի լաց
լինի, երբ նորան ես դբօսնելու եմ տանում,
ննջել այնքան՝ որքան ես հարկաւոր եմ
համարում և գիշերները երկար չը նստել:
Տղան ուշը գլուխը բերելով՝ դրկում էր ինձ
կրկնելով. «լաւ, լաւ, ես այնպէս առողջ
պիտի լինեմ և այնպէս պիտի մեծանամ, որ
ոչ մայրս և ոչ քեզինքն չը ճանաչեն ինձ...»:

Ես յաճախ տիկին Մարիամից նա-
մակներ էի ստանում, որոնց մէջ նա ինձ

պատուիրում էր հոգ տանել տղայի առող-
ջութեան վերայ, բայց ցաւօք սրտի օրըս-
տօրէ՛ ես այն եզրակացութեանն էի զալիս,
որ ուսումն առողջութեան հետ զուգնթաց
տանելն անկարելի է՝ ինչպէս դէպի լուսին
ճանապարհորդելը: Եթէ ուսանելի առար-
կաները Միքայէլին համար շատ դժուար
լինէին՝ հեշտ կը լինէր ինձ դործը կարգի
բերել. ես յետ կը փոխէի նորան երկրորդից
առաջին դասատունը, բայց այդ առարկա-
ները, թէ և անշահ՝ նա շատ գեղեցիկ դի-
տէր, ուրեմն բանը ոչ թէ ուսումն էր, այլ
ժամանակն և զիսաւոր հոգսը թշուառ
դերմաններէն լեղուն էր՝ որի մէջ երեխան
քիչ թոյլ էր: Սորանում ես արդէն անզօր
էի և չէի կարող օգնել, յոյսս միայն առա-
ջիկայ տօների վերայ էի դրել. երկու շա-
բաթուայ հանգստութիւնը նորից յետ կը

բերէ երեսայի առողջութիւնը, որը վշաց-
րել էր անհամեմատ աշխատանքը:

Եթէ Միքայէլը անտարբեր լինէր
դէպի այն ամենը, ինչ որ կատարվում էին
նորա շուրջը, եւ շատ քիչ կը հոգայի նո-
րա մասին, բայց անյաջողութիւնները նա
զգում էր աւելի շատ և աւելի էր ազդում
նորա վերայ՝ քան յառաջադիմութիւն-
ները: Դժ յիշած ուրախութեան բո-
ւետիքները և հինգեակները դժբաղդաբար
խիստ քիչ էին պատահում: Լոյս այնպէս էի
վարժուել նորա դէմքից հասկանալ ամեն բան,
որ հէնց նա մանում էր թէ չէ՝ եւ իսկոյն
առաջի հայեացքից իմանում էի, թէ բանն
անյաջող է գնացել: «Դու վատ նշանակ
ե՞ս ստացել, հարցնում էի ես:— Լոյս:—
Ի՞նչ է, դասըդ չե՞ս իմացել: Երբեմն նա
պատասխանում էր. «չը գիտէի, բայց
յաճախ. «իմանում էի, բայց չը կարողա-

ցայ ասել:», Եւ յիրաւի Միքայէլի ընկե-
րակից երկրորդ դասառան առաջի աշա-
կերտը, որին ես բերում էի, որպէս ղե-
միասին պարագին, ասում էր՝ թէ Մի-
քայէլը այն պատճառով է վատ նշանակ-
ներ ստանում, որ չէ կարողանում լմացա-
ծը ասել: Որքան որ երեսայի մտաւոր և
ֆիզիքական ոյժերը սկսում էին սպառուել
այնքան էլ այդ անյաջողութիւնները սկը-
սում էին յաճախ կրկնուիլ: Եւ նկատում
էի երբ նա լաց եղած նստում էր դասերը
սերտելու՝ հանդարտ էր երևում և հանգիստ,
բայց այդ կրկնապատկուած եռանդով, ո-
րով ձեռքն էր առնում դասերը, երևում
էր նորա մէջ յուսահատութիւն և մի տե-
սակ տենդ: Երբեմն էլ նա քաշվում էր
սենեակի մի անկիւնը, երկու ձեռքով սեղ-
մում էր գլուխը և լռում. բորբոքուած տը-

ղանք երեւակայում էր, թէ ինքն իւր սիրելի մօր ոտերի աակ գերեզման է փորում և չը գիտէր, ինչպէս դարձան տանել ցաւին, զգալով՝ որ նոտաճէ մի կախարհուած շրջանում, որտեղից նորա համար դուրս գալու ճանապարհ չը կար։

Նորա գիշերային հսկումները սկսեցին հետզհետէ յաճախ կրկնուել։ Նա երկիւղեց՝ թէ արթնելով ես նորան կը հրամայեմ պառկել ննջելու, կամաց կամաց վեր էր կենում անկողնից կանթեղը դուրս բերում նախասենեակը և այնտեղ վառելով նստում պարտաւելու։ Նա էլ ուրիշ միջոց չէի գտնում, եթէ ոչ վեր կենալ կանչել նորան ու նորից հետը կրկնել բոլոր դասերը և հաւատացնել՝ որ նա խաւ գիտէ և ի զուր է իրեն եւ թարկում ցրտի։ Բայց վերջի ժամանակներն իրեն էլ չէր յայտնի թէ ինչ

գիտէ ինքն և ինչ չը գիտէ։ Նքրեխան վերջը կօրցնում էր իւր ոյժը, լղարում էր, դեմնում և աւելի խրատելով անձկութեան մէջ։ Առ ժամանակ ես համոզվել էի, որ միայն պարնպմունքը չէ իսկ նորանից ոյժը։ Մի անգամ ես նորան պատմութիւն էի անում, ուր «քեռին պատմում էր իւր քեռորդիներին», որ ես կատարում էի ամեն օր տիկին Սարիամի ցանկութեամբ։

Մի քայլը թռաւ տեղիցը վառվարաչքերով և բացականչեց. — «Ուրեմն դահեքեաթ չէ, ապա թէ ոչ...»

«Ապա թէ ոչ, ի՞նչ հարցրի ես զարմացմամբ։»

«Նա կրճտեց իւր ատամները փոստակ պատասխանի և վերջապէս հեկեկալով սկսեց լալ այնպէս սաստիկ, որ ես եր-

կար ժամանակ չը կարողացայ հանդատուց-
նել նորան: Երբ որ զի նա մտնէր ի
Եյբյան կարծակի լացի պատճառը
ցանկացայ իմանալ նորա ընկերակցից, բայց
նա կամ չը զիտէր և կամ չը ցանկացաւ
ասել, սակայն շուտով ինքս հասկացայ ե-
ղածը: Անկասկած Միքայէլը գերմանա-
կան դպրոցում շատ բան էր լսում, որ վի-
րաւորում էր նորա նուիրական զգացմունք-
ները, ծաղրաբար և ասելութեամբ էր վե-
րաբերվում նորա երկրի, լեզուի, հայրենա-
կան աւանդութիւնների, մի թուրքով ամեն
ինչի դէմ, որոնց նա իւր բնականիքով վարժ-
վել էր յարդելու սիրել:

Եյբյանի կարծիքներ կ'անհետանա-
յին մի այլ ազգայի մէջ ոչինչ հետեւանք
չը թողնելով, բացի խորին ասելութիւնից
դէպի իրենց ուսուցիչները, բայց այնպիսի

մի զգայուն տղայ, ինչպէս Միքայէլն էր,
չէր կարող այս ամենը տանել լռանց, սրտ-
նեղութեան և ցաւի: Այս չէր համար-
ձակվում բողոքել թէ և զուցէ մի անգամ
չէր պատահած որ նա կամենում լինէր ա-
ղաղակել վշտից, բայց աւաղ, նորա սիր-
տըն ալեկոծում էր, կրճատում էր աստամնե-
լը, վշտանում էր և բարկանում:

Եւ այսպէս տանջանքների, ամեն
անյաջողութիւնների ու վատ նշանակների
վերայ աւելացաւ բարոյական և աննկարադ-
րելի ցաւ, որով նա միշտ իւր օրերն անց
էր կացնում: Երկու ոյժ, երկու ձայն, ո-
րոնց հնազանդութիւն երեխայի սեպուհ պար-
տականութիւնն էր և երկուսն էլ ուրեմն
պիտի միմեանց հետ ամուր կապուած լի-
նէին, ընդ հակառակը Միքայէլն մղում
էին դէպի հակառակ կողմեր: Եյն ինչ որ

մի հեղինակութիւն անուանում էր սպիտակ, վեհ, թանգ, միւսը — հարկւր մի տեսակ բիծերով, ծաղը ու արհամարհանքով էր նկարագրում, այն ինչ որ մէկը բարեգործութիւն էր համարում, միւսը ընդհակառակը յանցանք էր անուանում:

Տղան այդպիսի ներհակ դէպքում՝ ի հարկէ կը հետեւէր նորան, որի համար իւր սիրտը բաբախում էր և կտրտւում, բայց պարտաւոր էր ցոյց տալ, թէ լսում է և հակումն ունի դէպի հակառակ կուսակցութիւնը, նա հարկադրուած էր այդպէս ձևանալ և այդպէս անցկացնել օրեր, շաբաթներ, ամիսներ... Թշուառ դրութիւն մանկան:

Մեքայէլի վիճակը յիշատի շատ դառն էր: Բայց մեծի մասին մարդուս կենաց մէջ դրամաները սկսվում են քիչ ուշ,

երբ երիտասարդութեան ծաղիկ հառակը զըրկվում է իւր մատաղ տերեւներից, բայց այդ խեղճի համար ամեն դժբաղդութիւն, բռնաբարելը և ինքն իրեն բարոյապէս ճշնշելը, դադանի վեշտ, անհանգստութիւն, անպտուղ վաստակ, դժուարութեանց դէմ մաքառումն, մշտական յուսահատութիւն, այդ բոլորը Մեքայէլի համար սկսուեց իւր տասն և մէկ տարեկան հասակից: Նորակազմուածքը և ոյժերն անկարող էին տանել այդ ծանրութիւնը: Օրից-օր, շաբաթից շաբաթ խեղճ երեխան կրկնապատկում էր ճիղը, բայց դարձեալ հետևանքն աւելի վատ և ողբալի էր լինում: Տիկին Մարիամի քնքշաբար գրուած նամակները ծանրացնում էին այդ բեռը: «Եստուած դարդարեւ է քեզ աննման ընդունակութիւններով, դրում էր մայրը, յուսով եմ Մի-

քայլէլ որ կ'արդարացնես քեզ վերայ ու-
նեցած բոլոր յոյսերս, կը լինես ինձ հա-
մար ուրախութիւն և օգտաւէտ անդամ
քո հայրենիքին: Եռաջին անգամը տղան
ստանալով այդպիսի մի նամակ՝ դողդողա-
լով բռնեց իմ ձեռը և արտասուքը հեղե-
ղել պէս թափելով, ասաց. «Ի՞նչ անեմ,
ի՞նչ պէս վարուեմ», Եւ յիրաւի, նա ի՞նչ
պէտք է անէր. արդեօք կարող էր յաջ-
թեւ այն հանգամանքներին, որ նա բնու-
թեամբ անունդունակ է լեզուներ սովորելու
և չէ կարող աղաթ ու յաջող գերմաներէն
խօսել:

II

Սրճակուրդները հասան: Միքայէլն
այնքան լաւ վկայագիր չը ստացաւ. երեք
գլխաւոր առարկաներից անբաւարար էին
նորա նշանակները: Կորա թախանձագին
խնդրքով վկայագիրը տրեւին Մարիամին

չուղարկեցի:

«Սի՛րելիդ իմ, բացականչեց նա, մատ-
ները կտրատելով, մայրիկս չի իմանալ, թէ
մեզ հիմայ վկայագիր են տուել, իսկ ծնըն-
դեան Եստուած ողորմած է,,: Խեղճ ե-
րեխան յոյս ունէր, թէ կարող է տակա-
ւին իւր վատ նշանակներն ուղղել և ճշմա-
րիտն ասեմ, ես էլ յուսով էի. ես թաղրում
էի, որ մինչ այս-մինչ այն՝ կ'ընտելանայ
դպրոցական կարգերին, կը հաշտուի ամեն
բանի հետ, առաջ կը գնայ գերմաներէ-
նում, արտասանութիւնը կը կոկէ և որ
ամենից գլխաւորն է՝ քիչ ժամանակ գործ կը
դնէ դասերը պատրաստելու համար:

Եթէ այս յոյսս չը լինէր՝ վաղուց կը
գրէի տիկին Մարիամին գործի բոլոր հան-
գամանքները և կը ներկայացնէի նորան
այնպէս՝ ինչպէս որ կայ: Եւ յիրաւի, կարձ

Ժամանակում յոյսերս սկսեցին արդարանալ:
 Արձակութիւնս մի քիչ արեւելի վերջացէլ
 սպանցաւ երեք գիրադանցն շանակեկոյ՝ որով
 ցից մեկը լստիններէն ինչու լստին լստին
 և Էմիլը զաստանը միայն նստելով
 մանաւոր gaudeo բայի անցեալը կը գրեց
 նի- gaudis sum: Եւ անպիշ գիտէր, ինչ
 պատճառով որ երկու լաւ նշանակներ տաւ
 նալուցքի: Հարցրեց ինձ, ի՞նչ պէտէ չալ
 տիններէն Խորոխանում եմ, Եւ կարծեմ
 էի, թէ Խորախում թիւնից՝ տղայի ակնքը
 թռել է: Եւ իսկոյն իմ քորը անամակ գըտ
 րեց, որը սկսեալ է այս կոգքերով (անմա
 զին մայրիկ գիտես ի՞նչ պէտէ կը գրեց
 gaudeo բայի perfectum: Երեւի ոչ, Դու
 և ոչ իմ փոքրիկ տղինէն այդ չը գիտէր
 որովհետեւ ամբողջ զաստանը միայն ես
 եմ իմացել:

Այս Միքայէլը իւր մօրը պաշտում էր
 Երեք գիրադանց նշանակներ տալու
 արդիւն տալէ հետոյ մտնելու չէր՝ ապա ինձ
 ինչո՞ւ հարցնէ ինքնուրեք գիտեմք perfecta
 - de particia: Եւ որովհետեւ ամբողջ հոգն
 - արեւ համեմատեալ այդ գիրադանց նշան
 - նակներէ իմ հարցանելը: Եւ այդ իմ քորը
 - բարձր երջանկով թեանս փայլը երկարա
 - մեռ չէր: Եւ արտաքին արտաքին թիւնը
 - քանդեց այն ամենը, ինչ որ ստեղծել էր
 - ջերմեռանդ աշխատանքը և առարկաների
 - անհափ քանակութիւնը թոյլ չէին տալիս
 երեխային ամեն մի առարկային այնքան
 ժամանակ նուիրել, որքան պահանջում էր
 նորա յոգնած յիշողութիւնը:
 Եւ Միքայէլը հանդամներ աւելի շատացրեց
 անպաշտութիւնների թիւը:
 Միքայէլը և նորա ընկերակիցը մոռա

ցել էին մի գրաւոր դասի համար ինձ դիմել
և չէին կարողացել պատրաստել: Այնքանիս
համար յաջող անցկացաւ, որովհետեւ նորան
ինչպէս առաջին աշակերտին, չը հարցրին
էլ, բայց Միքայէլին հրապարակական յան-
դիմանութիւն արին, սպառնալով՝ որ ու-
սումնարանից կ'արտաքսուի, եթէ միւս ան-
գամ ևս այդ կը կրկնուի: Ուսուցիչը են-
թադրեց, թէ նա հէնց դիտմամբ չէ ասել
այդ դասի վարժութեան մասին, որովհե-
տեւ ինքը չէր պատրաստել, բայց խեղճ
տղան՝ անընդունակ ամենափոքր սուտ ա-
սելու անգամ, չը կտրողացաւ մի պատճառ
գտնել իւր անմեղութիւնն ապացուցանելու
համար: Ի հարկէ նա իւր պաշտպանու-
թեան համար կարող էր ասել, որ այդ
դասը և իւր ընկերն էլ է մոռացել պատ-
րաստելու, բայց այդ անել, կը նշանակէ ըն-

կերութեան վարկը և պատիւը ձգել: Պեր-
մանացին չը նայելով իմ արդարացնելուս՝
պատասխանում էր միայն, թէ իբրեւ ես նորա
ծուլութիւնը խրախուսում եմ: Այդ
հանգամանքն ինձ քիչ ներշնչութեան պատ-
ճառ չէր լինում, բայց աւելի անհանգիստ
էր անում ինձ Միքայէլի վերաբերմամբ:
Իրիկնադէմին նա կարծելով, թէ ես իրեն
չեմ նկատում, երկու ձեռքով գլուխը բռնե-
լով կամաց ձայնով ասաց. «ցաւում է,
ցաւում, ցաւում», Մօր նամակը, որի
մէջ նա ամենաքնքոյշ խօսքեր էր ընծայել
Միքայէլին՝ ստացած գերազանց նշանակ-
ների համար՝ առիթ եղաւ մի նոր հար-
ւածի: «Այո», ասում էր նա, ձեռքերը
ձրեւին թեքմելով, ապա լաւ կ'ուրախաց-
նեմ մօրս: Միւս օրը երբ ես նորա պայ-
տասակը տուի, քիչ մնաց թէ վեր ընկ-

ներ: Առանձնաբեր էր թողնել, որ ուսումնարան գնայ, բայց նա ինչ հաւատացնում էր, թէ իրեն լաւ է զգում, միայն խնդրեց՝ որ ուղեկցեմ մինչև դասատուն, որովհետեւ երկուշ կը գրում գլխի շուռ տալուց:

Ահարին Միքայէլը վերադարձաւ դարձեալ անբաւականացողիչ նշանակով: Նա այդ նշանակը ստացել էր այն դասի համար, որը հիմնալի պատրաստել էր, բայց իւր ընկերակցի ասելով՝ երկիւցից չէ կարողացել մի խօսք անդամ ասել: Առահա ուսումնարանում նորա համար կազմել էին հաստատուն կարծիք, իբրեւ թէ նա մի տղայ է լցուած վնասակար զաղափարներով, վատ բնազդումով, բխամիտ և ծոյ: Այդ վերջի երկու յանդիմանութիւնները նա նոր իմացաւ. սկսեց մաքառել ինչպէս խեղդողը ալիքների հետ, յուսահատուած:

բայց զուր տեղը: Այդ յուսահատ պատերազմի հետեանքն այն եղաւ, որ նա իւր վերայ ունեցած հաւատը և իւր օյժերը կորցրեց, նորա մէջ կազմուեց տխուր համոզմունք, թէ իւր աշխատանքը և նեղութիւնը զուր են, թէ նա երբեք չէ սովորիլ ուղիղ արտասանելը և պէտք է վատ կարգայ, բայց մի և նոյն ժամանակ նա զիտէր, թէ ինչպէս կը նայէ մայրն այն բանին, ինչպէս նա կը տանջուի և վերջապէս, ինչպէս այն ամենը կարող է ազդել նորա մօր թոյլ առողջութեան վերայ:

Արցա ընտանիքի անձուէր, բայց վերջին աստիճանի անհեռատես մարդը՝ Պալէտը, Օպէսինօից, երբեմն նամակ էր գրում Միքայէլին, ամեն անգամ կնքելով դորան յետադայ խօսքերով. « յիշէ՛ր, Միքայէլ, որ քո մօր ոչ միայն ուրախութիւն

ներ, այլ և կատարեալ առողջութիւնը բո-
լորովին կախուած է քո յառաջադիմութիւ-
նից,, : Այդ բանը Միքայէլը քաջ գիտէր
և երբէք էլ չէր մոռանում և մինչև ան-
գամ երազումն էլ տխուր և հանդարտ
ձայնով ասում էր. “մայրիկ, մայրիկ,, իբր
թէ ներողութիւն խնդրելիս լինէր, բայց ցե-
րեկով դարձեալ վատ ու վատթարագոյն
նշանակներ էր ստանում:

Սակայն ծննդեան տօները մօտենում
էին և անկարելի էր մոռանալ վկայագրի
մասին: Տիկին Մարիամին առաջագոյն այդ
գրեցի, կամենալով նորան մի կերպ զգու-
շացնել: Այդ նամակի մէջ բացարձակ և
վճռականապէս գրեցի՝ թէ երեսնան շատ
նուազ է և ծանրաբեռնուած պարապմուն-
քով և թէ նա իւր եռանդազին աշխա-
տանքին չէ կարող դիմանալ և թէ ինչպէս

երևում է, պէտք է ուսումնարանից հա-
նել նորան և դաստիարակել դիւղում, բայց
գլխաւորապէս ամրացնել նորա առողջու-
թիւնը: Ստացած պատասխանից հասկա-
ցայ, որ նորա մայրական ինքնասիրութիւ-
նը վերաւորուած է, բայց այնու ամենայնիւ
նա պատասխանել էր, ինչպէս խեղացի կին
և սիրող մայր: Արկիւղ կրելով որ մի գուցէ
Միքայէլին աւելի յուզեմ, ես ոչինչ չա-
սացի նորան այդ նամակի և ուսումնարա-
նից հանելու մտադրութեան մասին, մի-
այն յայտնեցի թէ ինչպիսի հետեանք որ
ունենայ նորա ուսումը, այնու ամենայնիւ
մայրը քաջ գիտէ, որ իւր որդին աշխա-
տել է և կարող է այդ անյաջողութիւննե-
րը արդարացնել: Ինչպէս երևում է, իմ
խօսքերը թեթեացրին նորան, նա ակօնց
սրտանց երկար լաց լինել, որ բաւական

ժամանակէ ի վեր չէր սրտանայ: «Ար-
քան ցաւ եմ սրտածառում մօրս, լոյով ա-
սում եր նա: Բայց միտը բերելով որ շու-
տով գնալու է դիւղը, տեսնելու է մօրը, փոք-
րիկ օւղինէն և իրենց բարեկամ Պատե-
ռին, նա ժպտում էր լացի հետ միասին:
Այս էր էի ձգտում շուտով Օտէսինօ գը-
նալու, որովհետեւ փնտնում էր կարողու-
թիւնը չէր մնացել ինքզինքն իրենց գրու-
թեանը նայել: Այնտեղ նորան սպասում էր
մօր սիրտը, շրջադատողներին ուշադրու-
թիւնը, խաղաղութիւն և քաղցր հանգս-
թիւն:
Ուստի այնտեղ բուն ազգային կեր-
պարանք կը ներդնէ, և ոչ թէ օտար ու մեր-
ժող. այնտեղ հայրենի յատակ օդը կը լի-
նի և երեկոյի սիրտը կը տրոփէ, կը շնչէ,
աւրախ թեթեւ, թեթեւ.....»

«Եւ որա համար՝ անհամբեր սպասում
էի. որովհետեւ ինչպէս նորա փրկութեան և
մատերութե համարում էի մնացած օրերը,
որոնք բերին Ալեքսիէին նոր տրտմութիւն-
ներ: Եւ ինչ վարժութեան համար հրամա-
յուած էր դպրոցի մէջ գործածուած լեզ-
վով խօսել: Ալեքսիէին այդ մնացել էր
և ինչպէս ամեն գործում բացառութիւն
կազմող՝ բոլորի առաջ կրկին յանդիմանու-
թիւն ստացաւ: Գլխից ա պղծ մեղքը բոլոր

Այդ յանդիմանութիւնն աւելի մեծ
նշանակութիւն ունէր, որովհետեւ ձիշտ սո-
ւերից առաջ էր եղել: Չեմ ցանկանում
նկարագրել, թէ ի՞նչպէս այդ ներգործեց
ինքնասէր և հասկացող մանուկի վերայ,
ի՞նչպիսի շփոթութիւն եղաւ նորա մատաղ
զխում: Այդ մանկական սրտում ամեն բան
կտորկում էր և նա իւր առաջ յուսոյ փո-

խանակ՝ տեսնում էր անթափանցելի մութ։
 Իսկ զձ, նա խոնարհած էր անյաջողութիւն-
 ների առաջ, ինչպէս մի անիւ քամու ազ-
 դեցութեան դէմ։ Ա՛յ երջապէս, այդ տասն
 և մէկ-ամեայ մանկական երեսը եղերգա-
 կան կերպարանք էր ընդունում, նա այն-
 պէս էր նայում, կարծես թէ շարունակ
 արտասուէր խեղդում լինէր նորա կոկորդը
 և ուժով իրեն պահպանում էր հեկեկա-
 լուց, երբեմն նորա աչքերը նմանվում էին
 տանջուող թռչնի աչքերին. յետոյ, նորան
 պատում էր մի օտարոտի մոտտանջութիւն
 ու քնածութիւն. շարժողութիւնները լի-
 նում էին անհասկանալի և ձայնն անսո-
 վոր նուազ։ Արբեմն օդուտ քաղելով մի
 քանի լոպէ աղատ ժամանակից՝ ասում էի
 նորան, թէ հարկաւոր է մեզ գրօնելու։
 Մի քայելը չէր ղեմադրում, ինչպէս ա-

ռաջ պատահում էր, այլ վեր էր առ-
 նում գտակը և ինձ հետեւում, մի խօսք
 անգամ չը խօսելով։ Այս շատ ուրախ կը
 լինէի, եթէ նկատէի նորա մէջ անտարբե-
 րութիւն, բայց դժբաղդաբար այդ կերպա-
 րանքի մէջ ծածկուած էր յուսահատու-
 թիւն, ընկճումն, լուռ խոնարհումն դառն
 ճակատագրին։ Այս դասի էր նստում, լու-
 ծում էր խնդիրներ՝ ինչպէս և առաջ, բայց
 աւելի սովորութիւնից։

Պարզ նկատելի էր, որ նա մեքենա-
 յաբար կրկնելով վարժութիւնները՝ մի այլ
 բանի վերայ էր մտածում, կամ աւելի լա-
 ասած, ոչինչի վերայ չէր մտածում։ Մի
 անգամ երբ ես նորան հարցրի, թէ բոլոր
 դասերը պատրաստած է, նա ինձ թոյլ և
 կիսանինջ պատասխանեց. «Կարծեմ, դո-
 ւանից ոչինչ չը պէտք է դուրս դայ,։ Այս

վախեցայ մօր կողմից բան միտը բերել, թէ
մի դուցէ՛ աւելի շատացնեմ նորա յաւերը,
որոնք ընտելացել էին մահական շրթունք-
ներին:

Ատիկ տալով երեսայի օրից-օր թա-
ռամող և մաշուող մարմնին՝ սաքսափում
էի: Երեօր երակները, որոնք առաջ միայն
նորա չափազանց ուրախ ժամանակն էին
նկատվում, այժմ միշտ էին երևում: Ասայն-
քան գեղեցկացաւ, որ կարծես, մի քաջած-
պատկեր լինէր: Այդ մանուկ-հրեշտակին
նայելիս՝ ամէն անգամ սիրտս ձմրում էր և
ինձ վերայ մի թառամող ծաղկի տպաւորու-
թիւն էր անում: Առջի նայելուց՝ կա-
նոնաւոր դրութեան մէջ էր երևում, բայց
ընդ հակառակն օրից-օր նիհարանում էր
և կորցնում ուժը: Օտներ էր նորա հա-
մար պայուսակը զրքերով տանելը և նորա

թոյլ ոյժը չը ծանրաբեռնելու համար մի-
այն մի քանի գրքեր էի ձգում նորա մէջ,
իսկ մնացեալը ես էի տանում, որովհետեւ
վերջին ժամանակները ինքս էի նորան ու-
սումնարան տանում բերում:

Աւերջապէս եկան տօները. տիկին
Մարիամը Օւլէսինից մեր ետեւից ձիա-
ներ էր ուղարկել, նամակումն էլ յայտնել
էր, որ բոլորեքեանք մեծ անհամբերութեամբ
մեզ սպասում են և նամակը վերջանում էր
այս խօսքերով: «Աս լսել եմ, քեզ համար
շատ գոհաւոր է կարդալը և այդ պատճա-
ռով չեմ էլ սպասում քո լաւ նշանակնե-
րին, միայն ինձ ցանկալի էր, որ քո բոլոր
ուսուցիչներն էլ քո մասին այն համոզմուն-
քը ունենային, ինչ որ ես ունիմ, այն է՝
թէ դու կատարել ես այնքան ինչքան կա-

րող էիր և թէ քո զեղեցիկ վարք ու բար-
քովդ ծածկեցիր քո անբաւականացուցիչ
յառաջադիմութիւնը,:

Բայց դժբաղդաբար ուսուցիչները բո-
լորովին հակառակ կարծիքի էին նորա մա-
սին, ուրեմն և այստեղ նորա յոյսերը դար-
ձեալ ի-դերեւելան: Աւերջն յանդիմանու-
թիւնը զլիսաւորապէս նորա վարքին էր վե-
րաբերում և այսպէս ուսուցիչների ու մօր
կարծիքը բոլորովին տաւրեր էր: Պատմա-
նացի մանկավարժների կարծիքով՝ այն ե-
րեսաներն էին իրենց լաւ պահում, որոնք
ժողովուրդի սովորութեանց և լեզուի վե-
րայ արած իրանց ծաղրերին՝ պատասխա-
նում էին ժպիտով: Այլ ահա՝ այդ բարո-
յական կանոնի վերայ հիմնուելով, Սի-
բայէլին, որ մինչև անգամ յոյս չէր տա-

լիս վերջացնել ուսումը և որ զուր տեղ
էր բռնում, ուսումնարանից արտաքսեցին:
Այդ գոյժով նա երեկոյեան վերադարձաւ
տուն: Սաստիկ ձիւն էր դալիս. սենեակը
մութն էր և ես չէի կարող երեսայի ե-
րեսին վերայ փոփոխութիւն նշմարել: Սի-
այն տեսի, թէ ինչպէս նա մօտացաւ լու-
սամուտին և սկսեց առանց աչքը բարձ-
րացնելու՝ նայել օդի մէջ թափուող ձիւ-
նի փաթիլներին: Անախտանձեւե պիտի լի-
նէին նորա մօտաժողութիւնները, որոնք գետ-
նի վերայ քուլայ-քուլայ թափուող ձիւնի
պէս շուռ էին գալիս նորա խեղճ գլխում: Աս
բոլորովին աւելորդ համարեցի մի խօսք ան-
գամ ասել նորա ստացած յանդիմանութեան
կամ նշանակների մասին:

Այդ գերեղմանական լուութիւնը տե-

ւեց համարեա մի քառորդ ժամ, իսկ սե-
նեակի ներսը բոլորովն մթն'ց: Մեր ի-
րեղէնները սկսեցի արկղի մէջ դարսել և
տեսնելով, որ Միքայէլը դեռ անշարժ
կանգնած է պատուհանի առաջ՝ հարցրի
նորան.

Միքայէլ, ի՞նչ ես անում այդ տեղի:

Արդեօք ձգմարիտ չէ, ասաց նա դող-
դոջուն ձայնով և ամեն մի բառի վերայ
կըմկըմալով, որ մայրիկս և Հեղինէն այս
ըրայէիս նստած կանանչ առանձնատեսնա-
կում իմ մային են խօսում:

— Շատ կարելի է, բայց ինչո՞ւ ձայնդ
այդպէս զողզողում է, զուցէ հիւանդ ես:

— Ո՛չ, ոչինչ չը կայ, միայն սաստիկ
մըրսում եմ,:

Ես իսկոյն նորան պառկեցրի անկող-

նու մէջ և շորերը հանեցի ու խղձալով
նայում էի նորա մաշուած ոտներին:

Սախ նորան թէյ խմեցրի, յետոյ որ-
քան կարելի էր՝ տաք ծածկեցի:

— Հը, հիմա տաքացի՛ր:

— Այո, միայն գլուխս քիչ ցաւում է:

Խեղճ դուխ, ի՞նչ էր նորա ցաւե-
լու պատճառը: Յոգնած երեխան շուտով
ննջեց և նորա նեղ կուրծքը ծանր բարա-
խում էր:

Ա երջացնելով իրեղէնների դարսելը
և ինձ էլ նոյնպէս քիչ թոյլ զգալով՝ պառ-
կեցի անկողնիս մէջ ու հանդցնելով ճրագը
իսկոյն քնով անցի:

Սօսաւորապէս ժամը երեքին կան-
թեղի լուսից և ինձ ծանօթ միօրինակ
ձայնից արթնացայ, որը կրկնում էր լա-

տիներէնի բայերը: Աչքերս բացի, բայց սիրտս սաստիկ բաբախում էր: Սեղանի վերայ երևում էր կանթեղը և Միքայէլը մերկ՝ միայն մի շապիկով գլխերը առաջին դարսած կիսափակ աչքերով, վառվռուն ելեալով, դուխը խոնարհած, կիսանինջ դրութեան մէջ՝ կրկնում էր:

— Conjunctivus: Amem, ames, amet, amemas, ametis....

— Միքայէլ:

Conjunctivus: Amem, ames.....

Հարելով նորա ուսերին, կրկին կանչեցի Միքայէլ:—

— Եւ արթնացաւ ու զարմացած սկսեց աչքերը ճրպճրպացնել, իբր թէ ինձ չէ ճանաչում:

— Ի՞նչ ես անում, ի՞նչ է քեզ պա-

տահել:

— Բոլորը սկզբից կրկնում եմ, — պատասխանեց նա ժպտալով, վաղը ես սլիտի հինգ պտանամ....

Գրկեցի նորան ու խոր անկողնումը դրի. նորա մարմինը կրակի պէս այրվում էր: Բաղդաւաբապէս մեր բնական տան, մի բժիշկ էլ էր բնակում, իսկոյն նորան բերի: Բժիշկը երկար չը մտածեց:

— Եւ շօշափեց երեխայի երակի զարկը, ձևօքը դրաւ նորա գլխին և որոշեց հիւանդութիւնը... Միքայէլն ուղիղն բորբոքումն ունէր: Ո՛հ, երևի խեղճ երեխայի գլխում շատ բան չէ կարողացել տեղադրուել:

Բուպէից-բուպէ հիւանդութիւնը սաստկանում էր: Եւսնեց ժամանակ կորցնելու

հեռագրեցի տիկին Մարիամին և միւս
օրը դրօշ զանգակի սաստիկ ձայնը նորա
գալուստը ինձ խմացրեց: Նորա երեսը սե-
քօղի տակ գունատ էր, ինչպէս կտաւ, մի
առանձին ուժով նա իւր ձեռքերը դրել էր
իմ ուսի վերայ և իւր յուզուած աչքերն
անշարժ ձգած իմ վերայ հարցրուց:

— Կենդանի՞ է:

— Այո, բժիշկն ասաց, որ հիմա լաւ է:

Նա քաշեց երեսից քօղը. շնչառու-
թիւնից բողբոլին նամացել էր և վազեց
դէպի երեսայի սենեակը: Աս ուղիղ չէի
ասել. Միքայէլը թէև կենդանի էր, բայց
լաւ չէր: Նա չը ճանաչեց իւր մօրը, որը
նստել էր նորա մօտ և նորա ձեռքերը սեղ-
մել էր իւր ձեռքերի մէջ:

Այն ժամանակ նա միայն օկսեց ճիւղ-

ճիւղել աչքերը և նայել իւր վերայ խո-
նարհած մօրը, երբ ես նորա գլխին նորից
սառուց դրի: Նա իւր բոլոր ուժերը լա-
րել էր տաքութեան դէմ, նորա շրթունք-
ները դողդողում էին, վերջապէս նա ժըպ-
տաց և ասաց:

— Մայրի՛կ:

Մայրը բռնելով երեսայի երկու ձեռ-
քը մի քանի ժամ անշարժ նստեց նորա
մօտ, մինչև անդամ ճանապարհի հագուս-
տըն էլ չը հանած: Միայն երբ ես դար-
ձրի նորա ուշադրութիւնն այդ մասին՝ նա
ասաց:

— Այո, մոռացել եմ գլխաշուքս վեր առնել:

Երբ նա գլխաշուքը վեր առաւ, սիրտս
բողբոլովն ձմրուեց:

Նորա դեղձան մազերի մէջ, որոնք

զարդարում էին նորա մատաղ զլուխը՝ տեղ-
տեղ շօղում էին արծաթափայլ թելեր:
Պուցէ դոքա երեք օր առաջ բոլորովին
չ'են էլ եղել:

Այժմ ինքն էր փոփոխում եր'կայի
ճակատի վերայ դրած սառուցով թրջած
կտաւը և դեղը մատուցանում: Միքայէն
աչքերով հետեւում էր նորա ամենափոքր
շարժմանը, բայց էի սկսեց չը ճանաչել:
Երեկոյեան տաքութիւնը ստատկացաւ:

Տենդի մէջ նա մի ոտանաւոր էր ար-
տասանում, երբեմն էլ թօսում էր այն լե-
զուով, որով հրամայուած էր դպրոցում
խօսել, կամ լատիներէն բայերն էր խոնար-
հում: Անդադար սենեակից ես դուրս էի
գալիս, որովհետեւ չ'էի կարողանում այդ
լսել և տանել: Նա դեռ չը հիւանդացած

ճածուկ սովորել էր պատարագի արարո-
ղութիւնը՝ ցանկանալով դորանով մօրը սիր-
ած շահել: Մի դող պատել էր ինձ, երբ
այդ տաճն և մէկ-ամեայ մանուկն իւր մա-
հուան տաղնապի մէջ միակերպ սարա-
փեցնող ձայնով կրկնում էր՝ «Deus meus,
Deus meus, quare me repulisti et
quare tristis incendo dum affligit me
inimicus»:

Չեմ կարող բացատրել այդ խօսքերը
ինձ վերայ ինչ ճիշդ տպաւորութիւն էին
գործում:

Այս բոլորը Քրօհնէքից մի օր ա-
ռաջ էր: Փողոցից մեզ հասնում էր աղ-
մուկ, խօսակցութեան ձայն... զանգակների
զընգզընգոց: Քաղաքը ընդունեց ուրախ
և տօնական կերպարանք: Երբ բոլորովին

մթնել էր՝ պատուհանից երևում էր փողոցի միւս կողմում Էօլէա ծառը, վառված գոյնզգոյն մոմերով, զարդարած ոսկեզոծ և արծաթազոծ ընկոյզներով և այդ ծառի շուրջը երեսաների զլուխները թըռչկոտում էին աղօտ փայլուն խողովակով, կարծես, զսպանակների վրայից: Պատուհանները լուսացել էին, իսկ սենեակները լցուել էին ուրախութեան և հիացման աղաղակներով: Փողոցի միւս կողմից մեր ականջներին հասնող աղաղակը ցնծալից էր և այդ հրձուանքը ընդհանուր էր, միայն մեր երեսան էր կրկնում. «Deus meus, Deus meus, quare me repulisti...»

Մեր դռանը մօտենում էին աւետիք երգողները և «խորհուրդ մեծ», երգում: Օհնդեան զիշերը մօտենում էր, բայց

մենք վախենում էինք, որ դա մահուան զիշեր գառնայ մեզ համար: Այնպիսի լուսէ էր լինում, որ մենք կարծում էինք թէ երեսայի ուշը գլուխն է ժողովել, որովհետեւ սկսում էր ճանաչել մօրը և քեզին էին, բայց այդ բաղէնքը չափազանց կարճատե էին լինում: Նորա սաստիկ շքնառութիւնը երբեմն բոլորովին ընդհատվում էր: Նկարելի էր մոլորուիլ այդ փոքրիկ մանկան մի ոտն արդէն դերեզմանումն էր: Նորա միտքը վաղուց էր թողել նորա նիհար մարմինը, իսկ ինքը հիմայ բոլորովին էր մնաս բարեաւ ասել և թռել դէպի մի հեռավորութիւն ուր չէր տեսնում և զգում ոչինչ, մինչև անդամիւր հարազատ մօր գլուխն էլ, որը կիսամեռնկած էր նորա ոտերի տակ: Այս բոլորո-

վին անտարբեր եղաւ դէպի մեզ և աւելի
չէր նայում: Աորա ամեն մի շնչառութիւ-
նը հեռացնում էր նորան մեզանից:

Հիւանդութիւնը կամաց-կամաց վերջ
էր տալիս նորա մատաղ կեանքին: Արե-
խայի ծերացած ձեռներն անշարժ ընկել
էին, քիթը սրուել էր և երեսը սառն ու
խիտ կերպարանք էր ունդունել: Անշա-
ռութիւնն աւելի յաճախ էր լինում և վեր-
ջապէս, սկսուեց նմանուել ժամացոյցի շը-
շընջոցին: Ղարձեալ մի վայրկեան, կրկին
մի շունչ, և նորա կենսական ժամի վեր-
ջին աւաղի հատիկը պիտի ընկնէր, վախ-
ճանը պիտի ժամանէր:

Ղիշերուայ մէջ տեղը մենք այնպէս
կարծեցինք, թէ նա հոգին արդէն աւան-
դում է, որովհետեւ սկսել էր խըռխըռացնել,

տնքալ, ինչպէս ջուր կուլ տուող մի մարդ,
բայց յետոյ էլի լռեց: Ապայն հայելին,
որ բժիշկը դրել էր նորա բերնին ծածկուել
էր քրտինքով: Մի ժամից տաքութիւնը
սկսեց նուաղիլ և մենք այնպէս կարծե-
ցինք, թէ վտանդն անցաւ, հէնց բժիշկն
էլ մի փոքր յոյս առաւ: Թշուառ տիկին
Մարիամն ուշից դնաց:

Արկու ժամուայ ընթացքում նորա
մէջ կարելի էր նշմարել դէպի լաւը փո-
փոխութեան նշոյլներ և որովհետեւ չորս
գիշեր աչքս առանց խփելու երեխայի ան-
կողնու մօտ կանգնել էի և հաղը աւելի
շատ էր սկսել ինձ նեղացնել ուստի ես
դուրս էի եկել նախասենեակը և ընկնելով
մահճակալի վերայ խոր քուն մտայ: Տի-
կին Մարիամի ձայնը ինձ արթնացրեց:

Եւ այնպէս կարծեցի, թէ նա ինձ կանչում է, բայց գիշերային լռութեան մէջ եւ յայտնի ընցի, «Մի՛ քայէլ, Մի՛ քայէլ», մազերս փռքաղեց, երբ հասկացայ, թէ ինչպիսի տարօրինակ ձայնով էր նա իւր երեխային կանչում, և մինչեւ իմ տեղեցս բարձրանալը, նա վաղեց նախասենեակը և զողզոջուն ձայնով շշնջաց:

— Միքայէլը մեռել է:

Մի աչք ծակելում ես հասայ տղայի անկողնու մօտ: Ե՛յ, բարձի վերայ ընկած գլխի դիրքը, բաց բերանը, աչքերը մի կէտի վերայ անշարժ ուղղած, արձանացած երեսի գիծերը կասկածելու տեղիք չէին թողում, թէ ճշմարիտ Միքայէլը մեռել է:

Եւ նորան ծածկեցի վերմակով, որ

մայրը նորա նիհարացած մարմնու վրայից վաթ էր ձգել, ծածկեցի անշարժ աչքերը, իսկ յետոյ չարչարվում էի անբաղդ տիկին՝ Մարիամի ուշը գլուխը բերել: Տօների օրը թաղման համար պատրաստութիւն էր տեսնվում. շատ ծանր և անտանելի էր այդ օրը, որովհետեւ մայրը չէր համաձայնում իւր որդու մարմինը թողել, բայց յոյժերը լողկէից-լողկէ սպառվում էին: «Եւ ընկաւ գեանի վերայ, երբ եկին զազաղի չափան առնել, յետոյ երբ սկսեցին ննջեցեալին հագցնել, երբ դնում էին զազաղի մէջ կըրկին նորա ուշը գնաց: Եւորա յուսահատութիւնն ամեն մի քայլափոխում հանդիպում էր անտարբեր ժամհարներին, որոնք սովոր էին այդպիսի տեսարաններին և մինչև իսկ նա ցնդում էր: «Եւ ինքն էր զազա-

գի մէջ ատլասի տակ դարսում հարթուածք
 և ինչպէս ցնորուած՝ ասում էր, թէ երեւ-
 խայի գլխի տեղը շատ ցած է դրուած։
 Իսկ Սիքայէլը դեռ պառկած իւր ան-
 կողմում, հազած նոր համադգեստ և սպիւ-
 տակ ձեռնոյները քաշած, անշարժ և բոլո-
 րովին անտարբեր էր դէպի գերմանիայի
 մանկավարժան ընդհանուր թիւնը, լատի-
 ներէն բայերը և պարտաւորական լեզուն։
 Այնքապէս նորան գրին դադաղի մէջ
 ու յետոյ նաժկալի վերայ՝ շրջապատած եր-
 կու շարք մոմերով։ Այն սենեակը ուր վա-
 դաթառամ տղան այնքան լատիներէն բա-
 ռեր էր հոլովել, ուր այնքան խնդիրներ
 էր լուծել, փոխարկուել էր մէկ մատուռի,
 որովհետեւ լուսամուտի վարագոյրները չ'էին
 թողնում այնտեղ արեղակի ճառագայթ-

ներէն մանել, և քեքոյշ շողացող մոմերի լոյսը
 տալիս էին պատերին մի եկեղեցական փռ-
 ւանդ՝ կերպարանք։ Այնքալի լաւ նշանակ-
 ներ ստանալուց յետոյ՝ եւ էլ չ'էի տեսել
 Սիքայէլին բաց դէմքով։ Նորա նուրբ
 բարակ կիսադէմը դարձուած դէպի առաս-
 տաղը՝ թեթեւ ժպտում էր, կարծես թէ,
 նա այդ յանդիմենական հանգստութեան
 համար ուրախացել էր և իրեն աւելի եր-
 ջանիկ էր զգում։
 Ճրտղների փայլը նորա երեսին՝ ու
 ժպտալուն տալիս էր կենդանութիւն և
 ննջման կերպարանք։ Մամացկամաց նորա
 ընկերները սկսեցին հաւաքուիլ, որոնք սօ-
 ներին ոչ մի տեղ չ'էին գնացել։ Արեւստոյոց
 աչքերը լայնանում էր հիացմամբ՝ նայե-
 լով ճրագներին և նաժկալին. դու ցէ այդ

Քոքրիկ համազգեստաւորները զարմանում էին իրենց ընկերի երեսի խիստ արտայայտութիւնից և այն դերից, որ նա կատարում էր։ Մի քանի օր չը կար, որ նա իրենց մէջ էր և իրենց պէս կռացնում էր ուսերը ծանր պայուսակից՝ որ լցուած էր գերմաններէն զրքերով, ստանում էր վատ նշանակներ, յանդիմանութիւններ և անարգանքներ, ջնկւում էր իւր վատ արտասանութիւնով, իրենցից ամեն մէկը կարծող էր նորա ականջը քաշել, կամ մազերից ձգել, բայց հիմա նա իրենց բոլորից բարձր է, հանգիստ ու փառաւոր, չըջապատուած լուսով։ Բոլորեքեան յարգանքք և յուզուած էին նորան մօտենում, մինչև անգամ նորա ընկերն էլ, թէև չատառան առաջի աշակերտն էր՝ համեմատած նորա

հետ ոչինչ էր։ Արեւստները միմեանց թէ քաշելով ասում էին ցածր ձայնով, թէ այժմ նա էլ ոչինչի վերայ չէ հոգում և թէ այս րոպէին «Herr Inspektor», մշտնէր նա տեղից չ'էր շարժիլ, չ'էր վախիլ և նորանից, այնպէս հանգիստ կը ժպտար, թէ այնտեղ նա ամեն բան կարող էր անել, ինչ միայն ցոնկանոր, աղմուկ բարձրացնել, որքան կ'ուզենար և թեաւոր հրեշտակներին հետ կը խօսէր ինչ լեզուով էլ կ'ամենար։

Այդպէս միմեանց հետ քրտիալով նորա մօտենում էին ննջեցեալին և ասում էին հոգեհանգստեան աղօթքը։ Միւս օրը ծածկեցին դադաղը, ծածկոցը պնդացրին մեխերով և տարան գերեզմանատունը, ուր ձիւնով շաղախուած աւազը ծածկեց նո-

լան յաւիտեան իմ սէքերի առաջից։
 Այժմ՝ երբ ես այս գրում եմ—ան-
 ցել է մի ամբողջ տարի այն տխուր ժա-
 մանակից, բայց քեզ յիշում եմ և չեմ մո-
 ռանում, փոքրիկ Սէքայել, դու մեղմ-
 թառամ ազնիւ ծաղիկ։ Արտասանութիւնը
 վատ էր, բայց դորա փոխանակն ունէիր սի-
 բոյ աշնիւ սիրտ։ Զը գիտեմ՝ որտեղ ես
 և արդեօք լսում ես ինձ թէ ոչ, միայն
 գիտեմ, որ քո ուսուցիչը աւելի է սկսել
 հաղել և աւելի է արտում, էլ աւելի է
 միայնակ և դուցէ շուտով կը հեռուի քեզ...



ՀՀ Ազգային գրադարան



NL0322406

Մեր հրատարակութեամբ

Լոյս են տեսել

1, «Քնար խօսնակ» լանդստեյդ.

U. S. U. 4/55 5 - 50 4.

2,,Պօղոսն էր ուսուցչի օրագրից՝

Լիտվոսի պատմագծ - 20 է.



Ներկու Մանրավէպ, Ալփօնս Դօդէ'ց
(Ալփոնս Դոդէ- Միլե-շէնի ընչաւ) Գ. Է-15 Կ.

Մեր հայրեն.

Шушу. Тигрању Назарянц

Անք. հրատարակութեամբ

Լոյս ևն տնտես

1., Քնար խօսնակ, բանաստեղծ.

Ն. Տ. Ա. գինն է - 50 կ.

2., Պօղոսնի ուսուցչի օրագրից.

Լ. խալոսի պատմութեամբ - 20 կ.



Արթուր Ամերամբեղյան, Բաղիմա Վազէկի
(Լոյս տեսնելու էր Մեծ-շինքի շրջան) գ. է-15 կ.

Անք. հասցեն.

Սիւնայ, Գարանի Խաչարան